ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«11» մարտի 2021թ. № 149

ԵՐԿԱԹԵ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐՈՎ ԳՐԱՆԻՏԵ ՎԱՀԱՆԱԿՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով աշխատակազմի գլխավոր մասնագետ Միշա Թամամյանի զեկուցագիրը, Արցախյան երկրորդ պատերազմի ընթացքում զոհված և Սպիտակի քաղաքային գերեզմանատանը հուղարկավորված զինծառայողների գերեզմաններում երկաթե կոնստրուկցիաներով գրանիտե վահանակներ պատրաստելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4237 `հոդվածից հատկացնել 18 810 ՀՀ դրամ:
2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մարտի 11
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«12» մարտի 2021թ. № 150

«ՀԵՔԻԱԹ ՀԱՆԳՐՎԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հեքիաթ Հանգրվան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 2021 թվականի փետրվարի 3-ին դիմել է Սպիտակ համայնքի ղեկավարին՝ խնդրելով 06-006-0351-0012 ծածկագրով 9,4255 հա մակերեսով հողամասը մասնավորեցնել «Հեքիաթ Հանգրվան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ հողամասի սեփականության իրավունքը հանձնելով ընկերությանը՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 62-րդ հոդվածը:

Դիմումին կից ներկայացվել է «Հեքիաթ Հանգրվան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պետական ռեգիստրի գրանցման տեղեկանքի պատճենը և կանոնադրության պատճենը, լիազորագիր, փաստաբանի արտոնագրի և անձը հաստատող փաստաթղթի պատճենը, «ՍԴՎ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության պատճենը, 1997 թվականի թիվ 521-2 սեփականաշնորհման պայմանագրի պատճենը, 06-006-0351-0012 ծածկագրով 9,4255 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շինությունների չափագրման հաշվետվությունը:

Սպիտակ համայնքի ղեկավարի 2021 թվականի մարտի 2-ի թիվ 132 որոշմամբ վարչական վարույթի քննարկումը երկարաձգվել է և նշանակվել է 2021 թվականի մարտի 12-ին, ու 2021 թվականի մարտի 3-ի թիվ 034/06-327 գրությամբ «Հեքիաթ Հանգրվան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը առաջարկվել է ներկայացնել դիմումի քննարկման համար անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում՝ 06-006-0351-0012 ծածկագրով 9,4255 հա մակերեսով հողամասի վրա գտնվող շինությունների սեփականության իրավունքի գրանցման վկայական:

2021 թվականի մարտի 12-ին «Հեքիաթ Հանգրվան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացվել է միայն 1997 թվականի թիվ 521-2 սեփականաշնորհման պայմանագրի նոտարական վավերացված պատճենը:

«Հեքիաթ Հանգրվան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիմումը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ:

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հողամասերի մասնավորեցումը պետության և համայնքների սեփականության

ներքո գտնվող հողերից սեփականության իրավունքով հողամասերի տրամադրումն է քաղաքացիներին և իրավաբանական անձանց:

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հողամասը կարող է մասնավորեցվել դրա վրա գտնվող շենքի, շինության սեփականատիրոջը (սեփականատերերին):

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ հողամասի մասնավորեցման համար քաղաքացին կամ իրավաբանական անձը պարտավոր է ներկայացնել հողամասի վրա գտնվող շենքի, շինության նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վերաբերյալ փաստաթուղթը, եթե հողամասը կառուցապատված է, հողամասի օգտագործման իրավունքի գրանցման փաստաթղթերը, սահմանված կարգով կազմված հողամասի հատակագիծը, հողամասի վրա գտնվող շենքի, շինության բոլոր սեփականատերերի դիմումները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

«Հեքիաթ Հանգրվան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը չի ներկայացրել 06-006-0351-0012 ծածկագրով 9,4255 հա մակերեսով հողամասի վրա գտնվող շինությունների նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վերաբերյալ փաստաթուղթ, ինչպես նաև հողամասի օգտագործման իրավունքի գրանցման փաստաթղթեր:

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ մինչև համապատասխան որոշման ուժի մեջ մտնելը մասնավորեցման ենթակա չեն այն վիճելի հողամասերը, որոնց նկատմամբ իրականացվում է դատական վարույթ:

Արգելքը վերաբերում է նաև հողամասի վրա գտնվող շենքերի, շինությունների պատկանելության մասին դատական վեճերի դեպքերին:

«Հեքիաթ Հանգրվան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակից Պետրոս Ղազարյանը 2020 թվականի փետրվարի 26-ին դիմել է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե 06-006-0351-0012 ծածկագրով 9,4255 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շինությունների նկատմամբ «Հեքիաթ Հանգրվան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականության իրավունքը գրանցելու խնդրանքով:

Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանման 2020 թվականի մարտի 2-ի թիվ Կ-02032020-06-0069 որոշմամբ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցվել է:

«Հեքիաթ Հանգրվան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հայցադիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ խնդրելով պարտավորեցնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեին վերսկսել 2020 թվականի մարտի 2-ի թիվ Կ-02032020-06-0069 որոշմամբ կասեցված վարույթը և կատարել պետական գրանցում:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը հայցադիմումն ընդունել է վարույթ, և իրականացվում է դատական քննություն (գործ թիվ ՎԴ6/0048/05/20):

Առկա են հակասություններ դիմումին կից ներկայացված 1997 թվականի թիվ 521-2 սեփականաշնորհման պայմանագրում և չափագրման հաշվետվության միջև:

Մասնավորապես, 1997 թվականի թիվ 521-2 սեփականաշնորհման պայմանագրում շենքերի մակերեսը նշված է 900,0 քառակուսի մետր, իսկ հողակտորի չափը նշված է 10,072 հա, մինչդեռ չափագրման հաշվետվության մեջ շենքերի մակերեսը նշված է 4240,62 քառակուսի մետր (768,59 քառակուսի մետր 1990 թվականին կառուցված և 3472,03 քառակուսի մետր 2003 թվականին կառուցված), իսկ հողամասի չափը նշված է 9,42550 հա:

2021 թվականի մարտի 3-ի թիվ 034/06-327 գրությամբ «Հեքիաթ Հանգրվան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը առաջարկվել է ներկայացնել պարզաբանում նշված հակասությունների վերաբերյալ, սակայն պարզաբանում չի ներկայացվել:

1997 թվականի թիվ 521-2 սեփականաշնորհման պայմանագրի բովանդակությունը հնարավորություն չի ընձեռում նույնականացնել պայմանագրում նշված հողամասը և դրա վրա գտնվող շինությունները Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0351-0012 ծածկագրով 9,4255 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շինությունների հետ:

Բացի այդ, «Հեքիաթ Հանգրվան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չի ներկայացվել որևէ ապացույց այն մասին, որ 1997 թվականի թիվ 521-2 սեփականաշնորհման պայմանագրում նշված հողամասը և դրա վրա գտնվող շինությունները իրավահաջորդության կարգով փոխանցվել են իրեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 12-րդ և 13-րդ մասերով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածով, 54-րդ հոդվածի 1-ին մասով և 55-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. «Հեքիաթ Հանգրվան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի փետրվարի 3-ի՝ հողամասի մասնավորեցման խնդրանքի մասին դիմումը մերժել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Սպիտակ համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մարտի 12
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«12» մարտի 2021թ. № 157

«ԱՐՏՅՈՄ ԵՎ ՄԱԹԵՎՈՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 63-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի, հիմք ընդունելով «ԱՐՏՅՈՄ ԵՎ ՄԱԹԵՎՈՍ» ՍՊԸ-ի 2021 թվականի մարտի 9-ի հայտը, ***որոշում եմ.***

1. «ԱՐՏՅՈՄ ԵՎ ՄԱԹԵՎՈՍ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 06802127) տալ «ք. Սպիտակ, Ալ. Մանուկյան 1» հասցեում գտնվող հեղուկ վառելիքի լցման կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն՝ մինչև 2021 թվականի մարտի 31-ը ներառյալ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ տրամադրել թույլտվությունը հավաստող սահմանված ձևի փաստաթուղթ:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մարտի 12
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«12» մարտի 2021թ. № 152

«ԱՐՏՅՈՄ ԵՎ ՄԱԹԵՎՈՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 63-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի, հիմք ընդունելով «ԱՐՏՅՈՄ ԵՎ ՄԱԹԵՎՈՍ» ՍՊԸ-ի 2021 թվականի մարտի 9-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ԱՐՏՅՈՄ ԵՎ ՄԱԹԵՎՈՍ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 06802127) տալ «ք. Սպիտակ, Երևանյան խճուղի» հասցեում գտնվող հեղուկ վառելիքի լցման թվով երկու կայաններում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն՝ մինչև 2021 թվականի մարտի 31-ը ներառյալ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ տրամադրել թույլտվությունը հավաստող սահմանված ձևի փաստաթուղթ:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մարտի 12
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«12» մարտի 2021թ. № 153

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆՈՒՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի և Սպիտակ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 63-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Նունե Ավետիսյանի 2021 թվականի մարտի 10-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Նունե Ավետիսյանին (ՀՎՀՀ 66989347) տալ «ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան փողոց 325/1» հասցեում գտնվող խանութում (հիմնական շինություն՝ 23,8 քառակուսի մետր մակերես) ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2021 թվականի համար՝ ըստ եռամսյակների:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը ըստ եռամսյակների և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մարտի 12
ք. Սպիտակ